**Մայրենիի (ընթերցանության) օլիմպիադա**
**Մարզային փուլ, 5-րդ դասարան**
**2025-2026**
**Տևողությունը՝ 120 րոպե**

**ՄԱՅՐ**
**Ըստ Գեզա Գարդոնիի**

- **Միրելի՛ աշակերտ, ուշադիր կարդա՛ տեքստը։**

Միցո. այդպես էր կատվի անունը։ Ինչե՞ր չէր անում այդ զարմանալի կատուն։ Նա իսկույն հայտնվում էր, հենց որ լսում էր իր տիրոջ՝ Անդրիչի սուլոցը։ Իսկ եթե տղան սուլում և չորեքթաթ ման էր գալիս, կատուն ցատկում էր նրա մեջքին և սկսում տրորել թաթերով, ճիշտ այնպես, ինչպես տնային տնտեսուհիները խմորն են հունցում։

Միցոն շերտավոր էր։ Ճերմակի և մոխրագույնի մի զարմանալի խառնուրդ էր։ Աչքերը կանաչ էին, և դրանց խորքերում ոսկի ցոլքեր կային։

Աշնանային մի օր Անդրիչը ասաց ընկերոջը.

-Կատվի ձագ ուզո՞ւմ ես տեսնել։

Նրանք վազեցին դեպի ախոռ։ Մի ակնթարթում բարձրացան խոտանոց։ Կատվի ձագերն իրոք շատ էին։ Նրանք անիմաստ սողում էին մեկը մյուսի վրայով։ Միցոն նստած էր նրանց մեջտեղում և լիզում էր մերթ մեկին, մերթ մյուսին։ Միցոն նրանց մայրն էր։ Այսօր ի՞նչ տարօրինակ հայացքով, գրեթե չարությամբ էր նայում իր սիրելի Անդրիչին ու նրա ընկերոջը։

Նա կարծես հարցնում էր. «Ինչո՞ւ եք բարեհաճել, տղանե՛ր»։

Հետո կատուն շարունակեց լողացնել իր ձագերին։ Եվ մոռացնում էր այնպես, կարծես մեղմորեն դիպչում էր թավջութակի լարերին։

Այդ գիշեր մեծ դժբախտություն պատահեց։ Անդրիչենց տունը հրդեհվեց։ Գյուղում աղմուկ էր, խառնաշփոթություն։ Մարդիկ դույլերով, տակառներով վազում էին դեպի վառվող տունը։

Մի րոպեից կրակը հասավ ախոռին, այնտեղից՝ խոտանոց։ Տղաները ուզում էին վազել, փրկել Միցոյին ու նրա ձագերին, բայց մեծերը խստորեն արգելում էին։ Այդ պահին խոտանոցի դռան մեջ երևաց Միցոն։ Նրա ատամների մեջ ճոճվում էր ձագուկը։ Մայրը զգուշորեն իջավ և ձագին դրեց գետնին՝ տղաների ոտքերի մոտ։ Այնուհետև նորից պատի վրայով բարձրացավ խոտանոց և նորից հայտնվեց ձագուկի հետ, որին ևս ներքև իջեցրեց։

Բոցը հանկարծ կլանեց ամբողջ տանիքը։ Կտուրը ճարճատում էր, ճռռում, քանդվում։ Միցոն մի անգամ էլ կարողացավ վեր մագլցել։ Նա աղեկտուր ու սրտակեղեք մլավոցով դեսուդեն էր նետվում պատի եզերքով, կրակի լեզուների միջով։ Հետո հանկարծ շեշտակի թռիչքով նետվեց կրակի մեջ։

Տղաները երկար սպասեցին…

**Իսկ հիմա կատարի՛ր առաջադրանքները։ Քեզ մաղթում ենք առավելագույն ուշադրություն և բարձր տրամադրություն։**

1. **Ի՞նչ էր անում Միցոն Անդրիչի սուլոցը լսելիս։ Ընտրի՛ր ճիշտ պատասխանը։** **1 մ.**

1) Վախից փախչում էր։
2) Թաթերով խմոր էր հունցում։
3) Իսկույն հայտնվում էր։
4) Ցատկում էր նրա գոգը։

2. **Ի՞նչ ես կարծում, նշվածներից ո՞րը չի համապատասխանում Միցո կատվի նկարագրությանը։** **1 մ.**

1) սպիտակի ու շագանակագույնի խառնուրդով
2) կանաչ աչքերով՝ խորքերում ոսկեգույն ցոլքեր ունեցող
3) զարմանալի
4) շերտավոր

3. **Տեքստից դո՛ւրս գրիր հոմանիշների երկու զույգ.** **2 մ.**

_____ _____- , _____ _____

4. **Տեքստից դո՛ւրս գրիր հետևյալ բառերի հոմանիշները.** **6 մ.**

անմիջապես- _____
ակնթարթ- _____
կտրուկ- _____
իսկապես- _____
ձիանոց- _____
այրվել- _____

5. **Ըստ քեզ՝ ինչպիսի՞ն էին Միցոյի և Անդրիչի հարաբերությունները։ Խոսքդ հիմնավորի՛ր մի քանի նախադասությամբ։** **5 մ.**

_____
_____
_____
_____
_____

6. **Կարծի՛ք հայտնիր, թե ինչու էր Միցոն գրեթե չարությամբ նայում իր սիրելի Անդրիչին ու նրա ընկերոջը։ Մտքերդ ձևակերպի՛ր 3-4 նախադասությամբ։** **5 մ.**

_____
_____
_____
_____
_____

7. **Ըստ քեզ՝ բոլորից շատ ու՞մ էր վստահում մայր կատուն։ Խոսքդ հիմնավորի՛ր բնագրի տողերով։** **5 մ.**

_____
_____
_____
_____
_____

8. Ի՞նչ ես կարծում, մեծերը ճի՞շտ վարվեցին, երբ իրենց զավակներին թույլ չտվեցին օգնել կատվին: Մեկնաբանի՛ր մեծերի արարքի դրդապատճառները՝ մտքերդ ներկայացնելով 3-4 նախադասությամբ: 5 մ.

9. 4-5 նախադասությամբ շարադրի՛ր, թե ինչ էիր զգում պատմությունը կարդալիս և ինչու: 5 մ.

10. Ըստ քեզ՝ ճի՞շտ է ընտրված վերնագիրը: Հիմնավորի՛ր մտքերդ բնագրի դրվագներով: 5 մ.

11. Պատմության համար 5-6 նախադասությամբ ավա՛ղտ հորինիր: 8 մ.

12. Պատմության համար նոր վերնագի՛ր հորինիր: 2 մ.

Ընդամենը՝ 50 միավոր:

Ուշադրություն

- Տեքստից բառացի արտագրված նախադասությունների համար միավոր չի տրվում:

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Հասմիկ Հովհաննիսյան